ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի
գիտական խորհրդի՝ 07.10.2025 թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրություն

Օրակարգ

1. 2024-2025 ուսումնական տարում ամբիոնի կատարած աշխատանքների վերաբերյալ ամբիոնի վարիչի հաշվետվություն /Ա.Կնյազյան/:
2. 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսանողական հարցման արդյունքների ամփոփում:
3. Ուսանողների արտադրական պրակտիկայի նախապատրաստական աշխատանքների քննարկում:
4. Ամբիոնների վարիչների դասալսումների արդյունքների քննարկում:
5. Ասպիրանտների թեկնածուական ատենախոսության թեմաների ու գիտական ղեկավարների հաստատում:
6. Մագիստրոսական թեզերի թեմաների հաստատում:
7. Ընթացիկ հարցեր:

Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտական խորհրդի թիվ 2 նիստին 36 անդամներից ներկա էին 27-ը: Ֆակուլտետի դեկան Գ. Բարսեղյանը ողջունեց գործընկերներին և խոսքը փոխանցելով անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Ա. Կնյազյանին՝անցավ օրակարգի առաջին հարցին:

ԼՍԵՑԻՆ՝ 2024-2025 ուսումնական տարում անգլիական բանասիրության ամբիոնի կատարած աշխատանքների վերաբերյալ ամբիոնի վարիչ Աննա Կնյազյանի հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Ա. Կնյազյանը ներկայացրեց ամբիոնի կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը: Հաշվետու ժամանակահատվածում անգլիական բանասիրության ամբիոնի աշխատանքները ընթացել են մի շարք ուղղություններով՝ ուսումնական և ուսումնամեթոդական, գիտական և գիտամեթոդական, գիտակազմակերպական, ինչպես նաև միջազգային համագործակցություն: Ամբիոնի գործունեության առանցքում են հետևյալ աշխատանքները. ակտիվ համագործակցություն միջազգային գիտական կառույցների և համալսարանների հետ, գիտական հոդվածների հրատարակություն, գիտաժողովներին մասնակցություն:

Կատարվել են առարկայական ուսումնամեթոդական փաթեթների վերանայումներ և լրամշակումներ: Նշվեց, որ դասախոսների մասնագիտական կարողությունների բարելավմանը նպաստում է նաև նրանց ակտիվ մասնակցությունը տարբեր միջոցառումներին՝ գիտաժողովներ, սեմինարներ:

Դասախոսական կազմը մասնակցել է տեղական ու միջազգային կրթական և գիտահետազոտական հաստատությունների կողմից կազմակերպված աշխատաժողովներին:

Ամբիոնի գործունեության մյուս կարևոր ուղղությունը գիտական և գիտամեթոդական աշխատանքներն են: Այս ոլորտում ամբիոնը զգալի ձեռքբերումներ ունի: Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում հրատարակվել են 1 մենագրություն, 25 գիտական հոդված: Ամբիոնը մեծ ակտիվություն է ցուցաբերում նաև Armenian Folia Anglistika գիտական հանդեսի հրատարակման գործում՝ կատարելով և՛ գրախոսական, և՛ խմբագրական բնույթի աշխատանքներ:

2025 թ. ապրիլին Էրազմուս+ միջազգային շարժունության ծրագրի շրջանակում ամբիոնը ընդունել է Լիսաբոնի համալսարանի պրոֆեսորների, որոնք հանդես են եկել բովանդակալից դասախոսություններով: 2025 թ. մայիսին Լիտվայի Վիտովտ Մեծի համալսարանի այցելու պրոֆեսոր Յուրգիտա Բոնդան փոխգործակցության շրջանակում բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար դասախոսություն է կարդացել:

Նշվեց նաև, որ ս/թ սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 4-ը անգլիական բանասիրության ամբիոնի պատվիրակությունը Աննա Կնյազյանի գլխավորությամբ, որի կազմում էին բակալավրի ու մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողներ, Պյատիգորսկի պետական համալսարանում մասնակցել է կրթամշակութային ծրագրի:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվետվությունը գնահատել դրական: Որոշումն ընդունվեց միաձայն:

Դեկանն անդրադարձավ օրակարգի մյուս հարցերին՝ 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ուսանողական արդյունքների ամփոփմանը՝ նշելով, որ արդյունքներն ընդհանուր առմամբ գոհացուցիչ են, այնուամենայնիվ կրթության որակի բարելավումը շարունակական գործընթաց է:

Անդրադարձ կատարվեց նաև օրակարգի երրորդ հարցին՝ ուսանողների արտադրական պրակտիկայի նախապատրաստական աշխատանքների քննարկմանը: Քննարկվեց նաև օրակարգի չորրորդ հարցը՝ ամբիոնների վարիչների դասալսումների արդյունքների քննարկմանը: Ամբիոնի վարիչները փաստեցին, որ գործընթացն ընթանում է բնականոն հունով, և դասալսումները շարունակական բնույթ կկրեն: Հաստատվեցին մագիստրոսական թեզերի թեմաները:
Ասպիրանտների թեկնածուական ատենախոսության թեմաների ու գիտական ղեկավարների հաստատման շրջանակում.

ԼՍԵՑԻՆ՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ ***Գոհար Նաիրիի Գևորգյանի*** թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը (մասնագիտություն՝ Ժ. 01.07. Արտասահմանյան գրականություն):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Անուշ Սեդրակյանը նշեց, որ Գոհար Գևորգյանը եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի «Արտասահմանյան գրականություն» մագիստրոսի կրթական ծրագրի շրջանավարտ է, և անգլերենին տիրապետելը հնարավորություն կընձեռի ուսումնասիրելու բնագիր անգլո-ամերիկյան գրականություն:
Հետազոտության թեման՝ «Եվրոպական առասպելաէպիկական ավանդույթը և Ջոն Ռ.Ռ. Թոլքինի տեսական և վիպական ժառանգությունը» իրապես արդիական է, բովանդակում է գրականագիտական լայնածավալ ուսումնասիրություն:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ Գոհար Նաիրիի Գևորգյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ ***«Եվրոպական առասպելաէպիկական ավանդույթը և Ջոն Ռ.Ռ. Թոլքինի տեսական և վիպական ժառանգությունը» (Ժ.01.07. «Արտասահմանյան գրականություն» մասնագիտություն),*** և գիտական ղեկավար հաստատել արտասահմանյան գրականության ամբիոնի ***պրոֆեսոր, բ. գ. դ. Արա Հրաչիկի Առաքելյանին***: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԼՍԵՑԻՆ՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ ***Մարիամ Ռոբերտի Թորոսյանի*** թեկնածուական

ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը (մասնագիտություն՝ Ժ. 01.07. Արտասահմանյան գրականություն):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Անուշ Սեդրակյանը նշեց, որ Մարիամ Թորոսյանը եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի «Կիրառական լեզվաբանություն» մագիստրոսի կրթական ծրագրի շրջանավարտ է:
Ընդգծվեց հետազոտության թեմայի արդիականությունը («Հիմարների գրականության» դասական ավանդույթը և 20-րդ դարի անգլիալեզու վեպը»), նախանշվեցին ատենախոսության բովանդակային կառուցվածքի հիմնական ուղիները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ Մարիամ Ռոբերտի Թորոսյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ ***«Հիմարների գրականության» դասական ավանդույթը և 20-րդ դարի անգլիալեզու վեպը»*** (Ժ.01.07. «Արտասահմանյան գրականություն» մասնագիտություն), և գիտական ղեկավար հաստատել արտասահմանյան գրականության ամբիոնի ***պրոֆեսոր, բ. գ. դ. Արա Հրաչիկի Առաքելյանին:*** Որոշումն ընդունվեց միաձայն:

Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ՝ Անգլերենի թիվ 1 ամբիոնի ասիստենտ, մ.գ.թ. Ռուզան Գրիգորի Կուլիկյանի հեղինակած «Անգլերենի երկրագիտական ենթալեզվի ուսուցման խնդիրներ» ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ֆակուլտետի մեթոդական խորհրդի նախագահ Նարինե Հարությունյանը նշեց, որ ուսումնամեթոդական ձեռնարկը նախատեսված է բուհերի ուսանողների, դասախոսների, ինչպես նաև զբոսաշրջային անգլերենի ուսուցման առանձնահատկություններով հետաքրքրվող հետազոտողների համար: Ձեռնարկը կարևորում է լեզվաերկրագիտական անգլերենի ուսուցման հիմնախնդիրները, երկրագիտության ուսուցման առանցքային տարրերը: Ընդգծվում է

հանրամշակութային իրույթների ու ազգամշակութային նշույթավորում ունեցող բառապաշարի ուսուցման շրջանակը, ինչն իրապես կարևոր է արդի միջգիտակարգային հետազոտությունների համատեքստում: Առանձնակի կարևորություն ունի ձեռնարկի մեթոդական բաղադրիչը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հրատարակության երաշխավորել Ռուզան Գրիգորի Կուլիկյանի հեղինակած «Անգլերենի երկրագիտական ենթալեզվի ուսուցման խնդիրներ» ուսումնամեթոդական ձեռնարկը: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԼՍԵՑԻՆ՝ 2026-2027 ուսումնական տարում Ժ.02.07 Ռոմանագերմանական լեզուներ մասնագիտությամբ առկա ուսուցմամբ ասպիրանտուրայի անվճար համակարգ ընդունվելու նպատակով հայտ ներկայացրած ***Մանանա Հմայակի Ավագյանի*** թեկնածուական ատենախոսության հետազոտության ընդհանուր թեմայի և գիտական ղեկավարի նախնական հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աննա Տարիելի Կնյազյանը ներկայացրեց հետազոտության թեման՝ ընդգծելով միջգիտակարգային բնույթը ***(«Կանանց և տղամարդկանց խոսքային վարքի առանձնա-հատկությունները սոցիալական մեդիա դիսկուրսում»)***: Ուսումնա-սիրությունը լայն իմաստով բովանդակում է լեզվաբանության, մեդիա դիսկուրսի և հաղորդակցության գիտակարգերի դրույթները: Հետազոտության արդիականությունը պայմանավորված է սոցիալական հարթակներում հաղորդակցման առանձնահատկությունների վերլուծության կարևորությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել 2026-2027 ուսումնական տարում Ժ.02.07 Ռոմանագերմանական լեզուներ մասնագիտությամբ առկա ուսուցմամբ ասպիրանտուրայի անվճար համակարգ ընդունվելու նպատակով հայտ ներկայացրած ***Մանանա Հմայակի Ավագյանի*** թեկնածուական ատենախոսության հետազոտության ընդհանուր թեման՝ *«Կանանց և տղամարդկանց խոսքային վարքի առանձնահատկությունները սոցիալական մեդիա դիսկուրսում»:*

Նախնական գիտական ղեկավար՝ անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, ***բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աննա Տարիելի Կնյազյան:***

Որոշումն ընդունվեց միաձայն:

ԼՍԵՑԻՆ՝ «Լավագույն ուսանող» մրցույթին մասնակցելու նպատակով եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի «Անգլերեն լեզու, գերմաներեն լեզու և հաղորդակցություն» բակալավրի կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանող ***Անի Կամոյի Պողոսյանի*** թեկնածության հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Նշվեց, որ Անի Պողոսյանն ունի ուսման բարձր առաջադիմություն, սովորում է անվճար ուսուցման համակարգում, ակտիվորեն ներգրավված է կրթամշակութային նախաձեռնություններում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Միաձայն քվեարկության արդյունքում որոշվեց հաստատել Լավագույն ուսանող մրցույթին ***Անի Կամոյի Պողոսյանի*** թեկնածությունը:

ԵԼՀ ֆակուլտետի դեկան և
գիտխորհրդի նախագահ,
բ.գ.թ., դոցենտ՝ Գ. Ռ. Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար,
բ.գ.թ., դոցենտ՝ Մ. Գ. Դալալյան

07.10.2025 թ.